

«29» «Տեպրեմբեր»-ի 2017 թվականի թիվ 1019-Ա

«23» «մարտի» 2017 թվականի թիվ 117-Ա



ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ
ք. Երևան

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ
ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Կառավարության ծրագրի մասին» N1060-Ա որոշումը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1300-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1049-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 9-րդ կետի 24-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Հայաստան-Սփյուռք գործակցության, առողջապահության բնագավառում սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման, սփյուռքում հայապահպանության օժանդակման, Հայաստանում և սփյուռքում միջոցառումները համատեղ ու արդյունավետ իրականացման նպատակով հաստատել միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն N1 հավելվածի:
2. Ծրագրով նախատեսված համատեղ միջոցառումների կատարումը համակարգելու նպատակով ստեղծել համակարգող հանձնաժողով՝ համաձայն N2 հավելվածի:
3. Հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել համակարգող հանձնաժողովի համանախագահներին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն
Լ. Ալթունյան

Հայաստանի Հանրապետության
սփյուռքի նախարարություն
Հ. Հակոբյան